



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Վերա Հունանյան

Մանկապարտեզ՝ « 118 մսուր մանկապարտեզ » ՀՈԱԿ

2022թ.

# Բովանդակություն

Բովանդակություն.....	1
Ներածություն.....	2
Խաղը որպես պարապմունքի տեսակ.....	4
Հետազոտական աշխատանք.....	5
Գրականություն .....	8

# Ներածություն

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման հիմնական ուղղություններից էլնելով՝ մանկապարտեզում իրականացվող տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքներ իրականացվում են որոշակի համակարգով:

SUՊ-ի զարգացման պարապմունքները բխում ՝ յուրաքանչյուր տարիքային խմբի մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման ծրագրային խնդիրներից և պահանջներից: Պարապմունքների ձևով ուսուցման ընթացքում երեխաները տիրապետում են ծրագրով իրականացվող ուսուցման ընթացքում երեխաները տիրապետում են ծրագրով նախատեսված որոշակի գիտելիքների և կարողությունների, որոնք չեն կարող յուրացվել ինքնաբուխ խաղերի, մեծերի հետ ամենօրյա հաղորդակցման ինքնուրույն գործունեության միջոցով: Ուսուցողական կառուցվածքային մոդելը հնարավորություն է ընձեռնում, դաստիարակին տարբեր մեթոդիկաների և տեխնոլոգիաների դիդակտիկական տարածքում ուսուցման խթանման, իմաստի ընկալման, կշռադատման փուլերի կիրառման միջոցով հասնել նախատեսված կրթական, դաստիարակչական և զարգացնող նպատակներին:

Յուրաքանչյուր պարապմունքին դաստիարակին առաջադրված է կիրառել զանազան մեթոդներ՝ բառային, դիտողական, գործնական, խաղային, գրաֆիկական, իսկ առաջադրվող դիդակտիկ /զննական, բաշխիչ/ նյութերը միջոց են երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար: Շեշտադրված են նաև արդյունավետ ուսուցման մեթոդները / փոխներգործուն, ինտերակտիվ/ , որոնք համահունչ են վիճահարույց և միջնորդված ուսուցման սկզբունքներին և ուղղված են երեխայի որոնողական և իմացական գործունեության ձևավորմանը, համարձակ կարծիք հայտնելու կարողության զարգացմանը , իմացության գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը:

Փոխներգործուն մեթոդները համապատասխանում են անհատակողմնորոշիչ սկզբունքներին և կարող է նպատակաուղղված ծառայել նշված ուսուցման մոդելի խնդիրների լուծմանը:

Պարապմունքներում նաև ներառվել են ինտեգրված պարապմունքներ, որոնց ընթացքում երեխային մատուցվում են նույն դիդակտիկ նպատակին ծառայող գիտելիքներ տարբեր ոլորտներից «խելամիտների մոլորակը», «դեպի լուսին», «հետաքրքրասերների քաղաքը»:

Հաշվի առնելով առնելով նաև այն հանգամանքը, որ ուսուցման գործընթացը ծարունակվում է նաև պարապմունքներից դուրս՝ ազատ ժամանցի ,զբոսանքի , խաղերի երեխաների ինքնուրույն գործունեության ժամանակ,պարապմունքներում առանձին բաղադրիչներով:

Ուսուցման կազմակերպման ձևերում ընդգրկվում են նաև խաղ-մրցույթները, ինտելեկտուալ խաղերը:

«Մաթեմատիկան պետք է սիրել թեկուզ նրա համար, որ կարգի է բերում մեր միտքը»:  
Մ.Վ.Լոմոնոսով

«Լինել այնպիսին ինչպիսին կան՝ չստիպելով իրենց դառնալ կատարյալ», «Ինքնուրույն շարժվել դեպի նպատակը», Բախվել անհաջողությունների և ընդունել դրանք՝ դասեր քաղելով», Մ.Մոնտեսսորի:

Նա ով մաթեմատիկա չգիտի չի կարող որևէ այլ բան իմանալ և նույնիսկ չի կարող իմանալ իր տգիտությունը: Ռ.Բեկոն

«Տիեզերքը հնարավոր չէ կարդալ, քանի դեռ մենք չենք սովորել լեզուն և չենք ծանոթացել սիմվոլներին, որոնցով դրանք գրված են: Այն գրված է մաթեմատիկական լեզվով, իսկ տառերն այն եռանկյունները, շրջանները և երկրաչափական այլ պատկերներն են, առանց որոնց անհնար է հասկանալ մի բառ: Առանց դրանց՝ մարդը խճճվում է մութ լաբիրինթոսում»:  
Գ.Գալիլեյ:

«Խաղը ծնում է ուրախություն, ազատություն, գոհունակություն, խաղաղություն իր մեջ և նրա շուրջը, խաղաղություն խաղաղությանմբ» Ֆրիդրիխ Ֆրոբել:

# Խաղը որպես պարապմունքի տեսակ

Պարապմունքի ընթացքում ուսուցման առավել միջոցներից մեկը խաղն է, որը դառնում է երեխաների ուսուցման առանձնահատուկ ձև խաղի և պարապմունքի յուրօրինակ միաձուլում: Մանկապարտեզում կրթական գործընթացը կազմակերպվում է մանկավարժի ղեկավարությամբ:

Պարապմունքի կազմակերպման արդյունավետ ճանապարհը խաղային սյուժետային նյութով ուսուցման կիրառումն է, սակայն շեշտը դրվի ուսումնական նյութի, խոսքն զննական միջոցների ճիշտ ընտրության հետազոտությունների կատարման վրա:

Որպես ուսումնական առաջադրանք խաղն իր տեղն ունի պարապմունքի կառուցվածքի մեջ և կարող է օգտագործվել որպես ուսումնական առաջադրանք:

Խաղային առաջադրանքների միջոցով երեխաները հեշտությամբ են յուրացնում մաթեմատիկական հասկացությունները ճշտվում և ամրապնդվում են նրանց գիտելիքները թվերի, երկրաչափական պատկերների, ժամանակի և տարածության մասին:

Խաղի նշանակության մասին հայ մեծ գրող Հ.Թումանյանը հետևյալն է գրել. «Խաղը նրա՝ մանուկ մարդու բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, դա նրա մեթոդն է: Եվ ամեն բան ինչ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունվում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու»:

Խաղի դաստիարակչական նշանակությունը մեծ դեր է հատկացրել Ա.Ա. Մակարենկոն: Նա գտնում էր, որ երեխան միշտ պետք է խաղա: Երեխան ունի խաղալու կիրք և այն պետք է բավարարել

Առանձնապես մեծ է դիդակտիկ խաղերի դերը: Ուսուցումը իրականում պետք է իրականացվի դիդակտիկ խաղերի միջոցով, որոնք ամենաարդյունավետն են:

Հատկապես խմբային խաղերի ընթացքում ձևավորվում են նաև անձնավորության բարոյական պատկերը:

# Հետազոտական աշխատանք

Հետազոտական աշխատանք գրելիս ուսումնասիրել եմ որոշ հեղինակների տեսություններ, որոշ տեսաբանների, կազմել եմ պարապմունքի պլան իրականացրել եմ ավագ խմբում:

Հետազոտականի մեջ ներառել եմ այլ մասակիցների դիտարկումները, ովքեր դիտարկել են պարապմունքը:

Աշխատանքը իրականացրել եմ ավագ խմբի 30 սան ունեցող խմբում, երեխաները ակտիվ էին նստացծ էին կիսաշրջան, պարապմունքի թման «Տարածության մեջ կողմնորոշում և տարածության չափում»:

## Նպատակ

1. Սովորեցնել ինչպես որոշել առարկաների դիրքը միմյանց նկատմամբ:
2. Ընդլայնել տարածության մասին հասկացությունները՝
3. Ամրապնդել տարածության չափումը պայմանական չափանմուշի միջոցով

## Ընթացք

Ցուցադրական և դիդակտիկ նյութերը երկրաչափական պատկերներն էին՝ զուլակներ գլաններ, շրջան, ուղղանկյուն կոն և այլն: Պարապմունքի ընթացքում զրուցեցինք և քննարկեցինք «Գնդիկ բոքոնիկի» անցած ճանապարհը, հեքիաթի հերոսների պատկերներով հավաքեցինք պաստառ համապատասխան պատկերներով՝ կենդանիներ ծառեր, կոճղեր, եղևնիներ ծաղիկներ թռչուններ: Կենդանիների միջև տեղադրեցի գունավոր զուլակներ, որոնք ցույց կտային գնդիկի տեղաշարժը մի գործող անձից մյուսը: Երեխաներին առաջարկեցի պատմել թե որ ուղղությամբ է գլորվում հեքիաթի հերոսը որ կենդանուց դեպի որ կենդանին է անցնում ինչ կա գնդիկի առջևում, հետևում, երբ նա գտնվում է այս կամ այն տեղում (կոճղի առջևում, ծաղիկների աջ կողմում, եղևնուց հեռու թփի մոտ և այլն)

Երեխաները պատմեցին, թե ում է հանդիպել գնդիկը իր ճանապարհին:

Պարապմունքի ընթացքում երեխաներին օգնել եմ ,որ հարցերը ձևակերպելիս օգտվեն «դեպի առաջ » ,«դեպի աջ», «դեպի ձախ» «հեռվում» և այլն: Վերադասավորել գործող անձանց գտնվելու վայրը՝ փոխելով Գնդիկի տեղաշարժման ուղղությունը և զույգների դիրքը, առաջարկել պատրաստել երեք չափի չափանմուշ՝ երկար ,կարճ ,ամենակարճ, համեմատել ճանապարհի երկարությունը: Զրույց-քննարկումից հետո երեխաները նստեցին սեղանների շուրջ և նկարեցին Գնդիկի անցած ուղին:



Այս պարապմունքի հետ կապված երեխաները կատարեցին ինքնուրույն աշխատանք նկարելով գնդիկի ճանապարհը, հերոսներին , բնություն պատկերող այլ նկարներ:

Այս աշխատանքը ուղղված էր երեխաների ինքնուրույնության ձևավորմանը, աշխատանքը պլանավորելու կարողությանը, տարածության մեջ կողմնորոշմանը:

Պարապմունքի ընթացքում երեխաները իրենց զգում էին ազատ, անկաշկանդ, կարողանում էին արտահայտել իրենց մտքերն ու գործողությունները: Ընտրված թեման այնքանով էր կարևոր, որ յուրաքանչյուր պահին դա անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես կողմնորոշվել տարածության մեջ՝ աջ, ձախ, հետ, առաջ և այլն:

Պարապմունքին ներկա էին երեք դիտարկողներ՝

Տնօրեն՝ Ա.Սարգսյան

Մանկավարժ՝ Ա.Սարգսյանը

## Դաստիարակ՝ Կ.Հարությունյանը

1.Նշեցին, որ դիտարկումից հետո եկանք այն եզրակացության, որ երեխաները շատ ավելի խելացի և ճկուն են, իրենց հարց ու պատասխանը տալիս են առանց բարդությունների, սահուն:

2.Պարապմունքը ծառայեց իր նպատակին քանի որ երեխաները ակտիվ էին գիտեն աջ, ձախ, հեռու, մոտիկ, ներքև վերև հասկացությունները ճանաչում և անվանում էին երկրաչափական պատկերները և մարմինները

3.Խորհուրդ կտամ դաստիարակին փոխի երեխաների դիրքը նստացնելով սեղանի շուրջ քանի վոր սեղանի շուրջ երեխաները ավելի կազմակերպվաց եվ հավաքված են լինում:

Այս պարապմունքի վերջնարդյունքում ես հասկացա որ երեխաները ամենա- ամենա խելացիներն են, որում ես համոզվում եմ ամեն օր :

Ես հանգեցի այն եզրակացության ,որ եթե ես կարողանամ պարապմունքները ավելի հազեցած անցկացնեմ դիդակտիկ պարագաներով, ապա երեխաներին ավելի դյուրին և մատչելի կլինի մատուցված նյութը:



# Գրականություն

<https://znanio.ru/media/----2588358>

<https://mankakanblog.wordpress.com>

<https://multiurok.ru/files/aforizmner-mat-ematikayi-ew-mat-ematikosneri-masin.>

Գիրք՝ Ս. Ա. Չիրուխյան, Տարրական մաթեմատիկական  
պատկերացումների զարգացումը մանկապարտեզում, 2014թ.,  
80-82 էջ: